ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

29.09.2016թ.

ք. Արտաշատ

Մարզխորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի 97 անդամներից 91-ը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ Կ. Իսախանյանը, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներ, ՋՕԸ-ի տնօրեններ, մարզպետարանի աշխատողներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Մարզում կանխարգելիչ պատվաստումների վիճակի մասին:

/Զեկ.՝ առողջ. և սոցապ.վարչ. պետ Ս.Խաչատրյան /

2. Բերքահավաքի ընթացքի և մթերումների մասին:

/Զեկ.՝ գյուղ. և բնապահպան.վարչ. պետ Հ.Տերեփերյան /

3. Մարզի համայնքների 2016թ. ութ ամիսների բյուջեների կատարման մասին:

/Զեկ.՝ ֆին. և սոցիալ-տնտ. զարգ. վարչ.պետ Գ.Եղիազարյան /

1. **Լսեցին՝**

Մարզում կանխարգելիչ պատվաստումների վիճակի մասին աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս.Խաչատրյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեցին ՝ մարզպետ Ռ. Աբրահամյանը , համայնքների ղեկավարներ:

Հանձնարարվեց

Ձեռնարկել միջոցոներ կանխարգելիչ միջոցառումները պատշաճ մակարդակով կազմակերպելու համար:

2.Լսեցին՝

Բերքահավաքի ընթացքի և մթերումների մասին աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Հ. Տերետերյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեցին ՝ մարզպետ Ռ. Աբրահամյանը , համայնքների ղեկավարներ:

Հանձնարարվեց

մարզպետի տեղակալ Ա. Վարդանյանին և գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Հ. Տերետերյանին

- Ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել բերքահավաքի,խաղողի մթերումների ,ինչպես նաև համայնքներում աշնանացանի հետ կապված ոռոգման ջրի մատակարարման գործընթացները:
- ՋՕԸ-երի հետ համատեղ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ գյուղացիական տնտեսություններին ոռոգման ջրով ապահովելու համար:
- ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել գյուղացիական տնտեսությունների և մթերող կազմակերպությունների միջև պայմանագրերի կնքման գործընթացը:

Առաջարկվեց

համայնքների ղեկավարներին '

- հնարավորինս աջակցել գյուղացիական տնտեսություններին՝ պայմանագրերի կնքման գործում:

3.Լսեցին՝

Մարզի համայնքների 2016թ. ութ ամիսների բյուջեների կատարման մասին աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեց ՝ մարզպետ Ռ. Աբրահամյանը :

Հանձնարարվեց

մարզպետի տեղակալ Ի. Շադյանին ու ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյանին '

● Ձեռնարկել միջոցառումներ համայնքների բյուջեների կատարման ուղղությամբ:

Առաջարկվեց

համայնքների ղեկավարներին '

● ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ ըստ հարկատեսակների մուտքերի ապահովման ուղղությամբ:

Մարզխորհրդի նիստն ամփոփեց մարզպետ Ռ. Աբրահամյանը :

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ